

Պահանջվող հաստիքը՝ վարչական և քաղաքացիական գործերով իրավաբան/փաստաբան:

Թեկնածուներ կարող են հանդիսանալ փաստաբանական գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանները, որոնք իրենց արտոնագիրը ստացել են վերջին երեք տարվա ընթացքում կամ փաստաբանական դպրոցում սովորող ունկնդիրները:

Աշխատանքի սկիզբը՝ 01.07.2019թ., փորձաշրջանից հետո՝ անորոշ ժամկետով:

Աշխատանքի նկարագրություն՝ ընկերությունը աշխատանքի է հրավիրում փաստաբանի կամ փաստաբանական դպրոցի ունկնդրի, ով մասնագիտացած է վարչական և քաղաքացիական իրավունքի ոլորտում:

Պահանջվող հմտությունները՝

1. Իրավունքի բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի աստիճան (իրավունքի մագիստրոսի կամ գիտությունների թեկնածուի աստիճանները կդիտվեն որպես առավելություններ):
2. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, վարչական իրավունքի և սնանկության վարույթի օրենքների /այդ թվում դատավարական օրենսգրքերի/, վճռաբեկ դատարանի, սահմանադրական դատարանի, ՄԻԵԴ-ի կիրառելի նախադեպային դիրքորոշումների իմացություն:
3. Նվազագույնը մեկ տարվա աշխատանքային փորձ:
4. Համակարգչային ծրագրերի լավ իմացություն՝ MS Office (այդ թվում՝ MS Excel), հայերեն և օտարալեզու իրավական աղբյուրներ, Համացանց, էլեկտրոնային նամակագրություն և այլն:
5. Հայերենի և անգլերենի գերազանց իմացություն, ռուսերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն: Անգլերեն և ռուսերեն լեզուների իմացությունը ներառում է այդ լեզուներով իրավական եզրույթների իմացություն և փաստաթղթերի կազմելու փորձ:
6. Պատասխանատվության բարձր զգացում, ճշտապահություն, հաղորդակցվելու և բանակցելու հմտություններ:

Աշխատանքային պարտականությունները՝

1. Դատական և արտադատական փուլերում Ընկերության հաճախորդներին իրավաբանական ծառայությունների մատուցում:
2. Առաջացող խնդիրների կապակցությամբ ուսումնասիրությունների կատարում, իրավական գնահատականների և խորհրդատվության տրամադրում:

Վարձատրությունը՝ որակավորման չափանիշներին համապատասխան՝ պայմանագրային:

Դիմելու կարգը՝ շահագրգիռ անձինք կարող են ներկայացնել ինքնակենսագրական **mihran.ghababyan@gmail.com** էլեկտրոնային փոստին՝ նամակի վերնագրում նշելով «Civil lawyer»: Ընկերությունը կապ կհաստատի միայն այն հավակնորդների հետ, որոնց հետ որոշվել է անցկացնել հարցազրույց:

Ընկերության մասին՝ «Վայզ Լո Ֆրմ» ՍՊԸ-ն հանդիսանում է փաստաբանական գրասենյակ: